

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍՅՈՒՆԵՑԻ ԱՌԱՋԻՆ՝ V դարի ԿԱՐԾԵՑՅԱԼ ՆԵՂԻՆԱԿ

«Շարակնոց»-ում պահպանվել է հոգևոր երգերի մի կանոն՝ անվանված Քրիստոսի հարությանը, անվանված Հարության ավագ օրհնություններ: Հայ հին և միջնադարյան գրականության ուսումնասիրությամբ զբաղված գրեթե բոլոր հայագետներն անդրադարձել են այս կանոնի շարականներին, համառոտ կամ ծավալուն քննությամբ արժևորել դրանք: Ուսումնասիրողներին միավորել է դրվատական կարծիքը շարականների գեղարվեստական արժանիքներն ու ամբողջությամբ վերցրած՝ կանոնի կառուցվածքային ինքնատիպությունը գնահատելիս: Սակայն շարականների հեղինակային պատկանելության խնդիրը երկար ժամանակ տարակարծությունների տեղիք է տվել, մինչև այսօր էլ մնացել չլուծված: Բանասիրության մեջ ավելի հաճախ շարականների հեղինակ է համարվել VIII դ. հայտնի շարականագիր, փիլիսոփա, թարգմանիչ Ստեփանոս Սյունեցին, երբեմն՝ V դ. համանուն մի կարծեցյալ հեղինակ՝ Սահակ Պարթևի ու Մեսրոպ Մաշտոցի «կրտսեր աշակերտներից»:

Առաջինը Մ. Չամչյանն էր, որ վկայակոչելով մի քանի տեղեկություններ՝ անդրադարձավ V դ. Ստեփանոս Սյունեցու խնդրին և արձանագրեց այդպիսի մի պատմական անձի գոյությունը՝ միաժամանակ հավաստելով, թե նա է կանոնի շարականների հեղինակը¹: Այնուհետև նույն կերպ վարվեցին շարականագիրների միջնադարյան ցուցակի «անանուն» կոչվող խմբագրության հեղինակն² ու «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» կազմողները³:

Սակայն ուշ շրջանի մեծ թվով բանասերներ, մատենագրական այլ տեղեկություններ հիմք ընդունելով, շարունակեցին կանոնի շարականները դիտել որպես VIII դ. Ստեփանոս Սյունեցու ստեղծագործություններ⁴ առանց անդրադառնալու Մ. Չամչյանի եզրահանգումներին, միայն երբեմն կտրուկ հերքելով դրանք⁵:

¹ Մ. Չամչյան, Պարմություն Հայոց, հ. Ա, Վենետիկ, 1784, էջ 780-782:

² Ն. Անասյան, Հայկական մաթեմատիկություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVIII:

³ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 19:

⁴ Տե՛ս Դ. Ալիշան, Սխական, Վենետիկ, 1893, էջ 23, 128, նույնի՝ Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1922, էջ 279: Գ. Զարբանյան, Հայկական եկեղեցական դպրության պատմություն, Վենետիկ, 1897, էջ 494-495: Դ. Խաչկունց, Հայոց կրթական բանաստեղծություն, Թիֆլիս, 1904, էջ 43: Ս. Ամարունի, Նին և նոր պարականոն կամ անվաներ շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 60-61: Մ. Օրմանյան, Ազգասպարում, Կ. Պոլիս, 1912, էջ 864-865: Ա. Զամինեան, Հայ գրականության պատմություն, մաս Ա, Նոր Նախիջևան, 1914, էջ 179: Ե. Դուրեան, Պարմություն հայ մաթեմատիկական, Երուսաղեմ, 1933, էջ 144:

⁵ Այս առումով թերևս միակ բացառությունը Մ. Բրոսսեն է, որ քիչ թե շատ ծավալուն անդրադառնում է V դ. Ստեփանոս Սյունեցու գոյության խնդրին և ժխտում Մ. Չամչյանի եզրահանգումները (տե՛ս Historie de la Siounie par Stepannos Orbelianin traduite de l'armenien par M. Brosset, second livraison, introduction, S. Petersburg. 1866, p.

Այս պարագայում, ահա, զարմանալի չէր, որ բանասիրության մեջ ձևավորվեց մի երրորդ խումբ էլ, որն արձանագրեց իր անորոշ կարծիքը թե՛ շարականների ստեղծման ժամանակի, թե՛ հեղինակի վերաբերյալ⁶:

Տարակարծությունները շարունակվում են մինչև օրս: 1973 թ. երաժշտագետ Ն. Թահմիզյանը «Էջմիածին» ամսագրում տպագրեց մի հոդված, որը հավակնում էր վերջնական պատասխան տալ հարցին, և Ս. Չամչյանից հետո փաստորեն երկրորդ հանգամանակից խոսքն էր այս կապակցությամբ⁷: Ավելին, եթե Ս. Չամչյանը սահմանափակվել էր V դ. կարծեցյալ Սյունեցու գոյությունը մատնանշող մատենագրական հաղորդումները վկայակոչելով, երաժշտագետը կատարում է մաս դրանց քննությունը և, հավելելով մի քանի այլ փաստարկներ, եզրակացնում, որ մշված շարականները հորինել է «ամենայն հավանականությամբ՝ սահակ-մեսրոպյան կրտսեր աշակերտներից մեկը՝ Սյունիքի Ստեփանոս անունով առաջին եպիսկոպոսը»⁸: Շուտով՝ 1975 թ., Ն. Թահմիզյանի հոդվածին մանրամասնորեն անդրադառնում և խնդրի վերաբերյալ իր մոր մոտեցումն է ներկայացնում Ստեփանոս Սյունեցու մատենագրական ժառանգության ուսումնասիրողներից Մեսրոպ վրդ. (այժմ արքեպս.) Գրիգորյանը՝ կտրուկ եզրահանգմամբ՝ «...Կարելի է համոզարտ մտօք եւ պարզ խղճով եզրակացնել թէ Ե. դարում Ստ. Սիւնեցի մը գոյութիւն չէ ունեցած»⁹: 1980 թ. հրատարակած գրքում Գ. Հակոբյանը, դարձյալ միայն կարճատև հերքելով V դ. Ստեփանոս Սյունեցու գոյությունը, կանոնի շարականները համարում է VIII դ. Սյունեցու ստեղծագործություններ և քննում ըստ այդմ¹⁰: 1982 թ. երաժշտական մի ժողովածուում այս շարականներից հատված է տպագրվում V դ. Ստեփանոս Սյունեցու անունով¹¹, որի գոյությունն այնուհետև վավերացվում է Հայկական սովետական հանրագիտարանում¹², իսկ 2002 թվականին լույս ընծայված «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում Ստեփանոս Սյունեցի Առաջին չի արձանագրվում¹³:

Ինչպես երևում է, խնդրո առարկա շարականների հեղինակային պատկանելության հարցը չի ապավում երկու համանուն հեղինակների շփոթով միայն. շփոթի դեպքում կյանքի է կոչվում մի պատմական անձ, որի գոյությունը հավաստող Ս. Չամչյանի վկայակոչած մատենագրական տեղեկությունները, ինչպես մաս Ն. Թահմիզյանի եզրահան-

44, 49 և այլն): Մ. Բրոսսեին համամիպ է Ն. Ալիևյանը, որը ևս, կարճաժամկետ հերքելով V դ. Սյունեցու գոյությունը, հղում է Բրոսսեի աշխատության նշված էջերը (տե՛ս «Հանդես ամսօրեայ», 1903, թիվ 8, էջ 249-250):

⁶ Շմմր. Ն. Գ. Քիպարեան, Պատմություն հայ գրականության, առաջին մաս, Վենետիկ, 1944, էջ 200-201: Մեսրոպ արքեպս. Գրիգորեան, Սրբեփանոս Սիւնեցի, Պեյրութ, 1958, էջ 44:

⁷ Ն. Թահմիզյան, Սյունեցի համանուն երկու երաժիշկներ և Հարության ավագ օրհնությունները, «Էջմիածին», 1973, N 2:

⁸ Նույն տեղում, էջ 37:

⁹ Մեսրոպ վրդ. Գրիգորեան, Ե. դարու Սրբեփանոս Սիւնեցիի մը գոյութիւնը վիճելի, «Հանդես ամսօրեայ», 1975:

¹⁰ Գ. Հակոբյան, Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980, էջ 148-156:

¹¹ Ոսկեփորիկ, հայ երգի գոհարներ, կազմող և խմբագրող՝ Ն. Թահմիզյան, Երևան, 1982, էջ 15:

¹² Հայկական սովետական հանրագիտարան, հ. 11, Երևան, 1985, էջ 137-138: Հոդվածի հեղինակն է Ն. Թահմիզյանը:

¹³ Այսպեղ խոսվում է միայն VIII դարի Սրբեփանոս Սյունեցու մասին, և Հարության օրհնությունները ներկայացվում են որպես նրա սրբեղծագործություններ:

գումները խիստ երկբայելի են, ուրեմն և՛ նոր քննության ու լուսաբանման կարոտ:

Միջնադարյան մատենագիրները, որոնց իբրև V դ. Ստեփանոս Սյունեցու մասին տեղեկություններ հաղորդող անկախ և մեկը մյուսին լրացնող աղբյուրներ վկայակոչում է Մ. Չամչյանը, չորսն են՝ Կիրակոս Գանձակեցի (XIII դ.), Հայսմավուրքի խմբագրող (XIII դ.), Թովմա Սեծոփեցի (XV դ.) և Ղազար Զահկեցի (XVIII դ.):

Անդրադարձանք նրանց առանձին-առանձին:

1. Կիրակոս Գանձակեցին «Պատմութիւն Հայոց» աշխատության առաջին էջերում, խոսելով V դ. թարգմանիչների մասին, տալիս է մի ցուցակ, որի մեջ հիշատակվում է ոմն Ստեփանոս Սյունեցի: Ցուցակը բավական ծավալուն է, ուստի մեջբերում ենք նրա վերջին մասը. «... Արձան, Խոսրով, Ղազար և յետոյ Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ՝ Հոռփանոս Սամուտացի»¹⁴: Ընդգծված «և յետոյ» բառերը Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսին որոշակիորեն առանձնացնում են մյուս թարգմանիչներից: Սակայն թարգմանչաց շարքում այս Ստեփանոս Սյունեցու հիշատակության փաստն ինքնին դիտվել է այնքան վճռորոշ, որ V դ. Սյունեցու գոյությունն ընդունողները կամ լռելյայն անտեսել են «և յետոյ» բառերը, կամ աշխատել ժխտել դրանց ժամանակատարբերիչ նշանակությունը: Այսպես՝ Մ. Չամչյանը Գանձակեցու այս հատվածը մեջբերում է առանց «և յետոյ» բառերի՝ տպավորություն ստեղծելով, թե Գանձակեցին հաստատապես հիշում է V դ. մի Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի¹⁵: Նկատենք, սակայն, որ Ստեփանոս Սյունեցին ցուցակում վերջինը չէ, ուստի նրա անվան կողքին «և յետոյ» բառերի գործածությունը ոչ մի կերպ չի կարելի բացատրել ոճական նկատառումներով: Մնում է «և յետոյ» բառերն ընդունել իրենց ուղղակի և ըստ էության միակ նշանակությամբ. դրանցով Գանձակեցին Ստեփանոս Սյունեցուն ժամանակով առանձնացնում է մյուս թարգմանիչներից:

Նույն՝ Թարգմանչաց վերաբերող պարբերության մեջ Գանձակեցին մի քանի տող հետո նորից է հիշում Ստեփանոս Սյունեցուն՝ վերջինիս մատենագրական երկերի կապակցությամբ. «Եվ յետոյ մեծն Ստեփանոս Սիւնեաց եպիսկոպոս, բազում մեկնութիւնս գրոց սրբոց եթող՝ Աւետարանացն համառօտ, և Յոբայ, և Դանիէլի, և Եզեկիէլի, և զպատասխանիս թղթոյն Գերմանոսի պատրիարքի Կոստանդնուպօլսի»¹⁶: Այստեղ թվարկված երկերի հեղինակը հաստատապես VIII դ. Ստեփանոս Սյունեցին է, Գանձակեցին ևս գիտի այդ¹⁷: Ուրեմն նա VIII դ. մատենագիրն V դ. Թարգմանչաց շարքում հիշում է՝ նրա և՛ ինքնությունը, և՛ ժամանակը ստույգ իմանալով, ինչպես նաև նրան երկու դեպքում էլ միևնույն ձևով («և յետոյ») առանձնացնելով մյուսներից: Ն. Թահմիզյանն էլ չի տարակուսում, որ երկրորդ անգամ հիշված այս Սյունեցին VIII դ. համանուն մատենագիրն է. երաժշտագետն ընդունում է նաև, որ այս երկրորդ հատվածում Սյունեցու կապակցությամբ գործած-

¹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխարասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 28:

¹⁵ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 781:

¹⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 29:

¹⁷ Նմմը, նույն պեղում, էջ 72:

ված «և յետոյ» բառերով «փաստորեն երկու պատմաշրջաններ են զատորոշվում»¹⁸ V և VIII դարեր: Իսկ թե առաջին հատվածում մույն Սյունեցու առթիվ գործածված մույն «և յետոյ» բառերը ինչպե՛ս կամ ինչո՛ւ են ըստ երաժշտագետի կորցնում իրենց «ժամանակատարբերիչ նշանակությունը», որով և առաջին հատվածի Սյունեցին «մնում է» V դարում, հասկանալի չէ: Այդ հատվածի «և յետոյ» բառերին երաժշտագետի տված մեկնաբանությունը, թե՛ «քանի որ հեղինակի (իմա՝ Գանձակեցու՝ Լ. Ս.) մտքերի շարունակությունը ևս ամբողջականությամբ վերաբերում է Թարգմանչաց շրջանին, որով պարզապես կորչում է «և յետոյ» խոսքի ժամանակատարբերիչ նշանակությունը»¹⁹, բռնազբոսիկ է: Նախ՝ մույն հիմունքով կարելի էր ժխտել նաև երկրորդ հատվածի «և յետոյ» խոսքի ժամանակատարբերիչ նշանակությունը, ապա՝ չէ՞ որ Գանձակեցու «մտքերի շարունակության» մեջ երկրորդ անգամ հիշված Ստեփանոս Սյունեցին հաստատապես VIII դ. հեղինակ է, ինչը ստույգ գիտի Գանձակեցին: Եվ եթե V դ. թարգմանչաց վերաբերող պարբերության մեջ հիշված է VIII դ. մատենագիրը, որի ապրած ժամանակը հայտնի է Գանձակեցուն, ապա ու՞ր է մնում պատմիչի «մտքերի շարունակությունը» իբր թե «ամբողջությամբ» V դ. թարգմանչաց վերաբերելու Թահմիզյանի համոզումը, որի հիմամբ էլ նա փորձում է ժխտել «և յետոյ» բառերի ժամանակատարբերիչ նշանակությունը:

Մ. Չամչյանը և Ն. Թահմիզյանը համոզված են, որ Թարգմանչաց պարբերության մեջ երկու անգամ հիշատակելով Ստեփանոս Սյունեցուն՝ Գանձակեցին շփոթում է V և VIII դարերում ապրած երկու համանուն հեղինակների²⁰: Արդյո՞ք այդպես է: Արդեն ասվեց, որ Սյունեցիներից մեկին՝ VIII դ. մատենագրին Գանձակեցին գիտի որոշակիորեն: Անորոշ-անձանորթը մյուսն է՝ V դ. կարծեցյալ Սյունեցին: Արդ, անհասկանալի է, թե անձանորթ V դ. Սյունեցու գոյությունն արձանագրող Գանձակեցին մույն այդ Սյունեցու առիթով, ընդամենը մի քանի տող հետո, ինչու՞ է հիշում 300 տարի հետո ապրած, իրեն ստուգապես հայտնի մատենագրի երկերը: Տրամաբանական կլինեք, եթե Թարգմանչաց պարբերության մեջ մի անգամ հիշելով իրեն անձանորթ V դ. հեղինակին՝ Գանձակեցին այլևս չանդրադառնար նրան: Պատմիչը, սակայն, վերադառնում է մի անգամ արդեն հիշված Սյունեցուն և վստահորեն թվարկում VIII դ. մատենագրին պատկանող երկերը: Կարծում ենք՝ Գանձակեցին չի շփոթում երկու համանուն Սյունեցիների, և Թարգմանչաց պարբերության մեջ երկու անգամ հիշատակված Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը մույն ինքը VIII դարի մատենագիրն է:

Այլ հարց է, թե Գանձակեցին VIII դ. մատենագրին ինչու՞ է, այնուամենայնիվ, հիշատակում V դ. թարգմանչաց շարքում: Այս հարցին դեռ կանոնադադանք, այժմ մի քանի խոսք V դ. կարծեցյալ Սյունեցու եպիսկոպոսության մասին: Ե՛վ Մ. Չամչյանը, և՛ Ն. Թահմիզյանը անվերապահորեն ընդունում են V դարում այդպիսի մի եպիսկոպոսի գոյությունը: Երկուսն էլ թեև չեն նշում իրենց աղբյուրը, բայց ակներևաբար նկատի ունեն Գանձակեցու հիշյալ փաստորեն ճիշտ չմեկնաբանված հատվածները: Հայ մատենագրության մեջ Սյունյաց եպիսկոպոսների, նրանց հաջորդության միակ և ըստ ամենայնի վստահելի

¹⁸ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 30:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 780-782, Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 30-31:

աղբյուրը Ստեփանոս Օրբելյանի (XIII-XIV դդ.) «Պատմություն մահանգին Սիսական» աշխատությունն է: Նպատակ ունենալով շարադրել Սյունիքի ոչ միայն քաղաքական, այլև եկեղեցական պատմությունը, լինելով Սյունյաց մետրոպոլիտ՝ հեղինակն ինքը բնականաբար շահագրգռված էր առավել անսխալ իմանալու իր նախորդներին: Անշուշտ, չենք ժխտում, որ մեկ ուրիշը, տվյալ դեպքում՝ Գանձակեցին, կարող էր ավելի ստույգ տեղեկություններ ունենալ հարցի մասին, եթե միայն ունենար: Իսկ Օրբելյանը, ահա, մեզ հետաքրքրող ժամանակահատվածում (IV-VI դդ.) Ստեփանոս անունով Սյունեցի ոչ մի եպիսկոպոս չի հիշում: Բերում ենք նշված ժամանակահատվածում Սյունյաց եպիսկոպոսների ցանկն ըստ Օրբելյանի²¹, կից տալով նաև նրանց աթոռակալման թվականներն ըստ Ղ. Ալիշանի²².

Տէր Մաշտոց – 369-415

Տէր Անանիա – 415-458

Տէր Նուն – 458-466

Տէր Գաղատ – 466-483

Տէր Մուշէ – 483-519

Ավելին՝ իր աշխատության I, գլխում, թվարկելով Սյունեցի մի քանի եպիսկոպոսների և հասնելով VIII դ. Ստեփանոս Սյունեցուն, Օրբելյանը կարծես հարևանցիորեն նշում է վերջինին՝ Սյունյաց եպիսկոպոսների մեջ **առաջինը Ստեփանոս անունը կրելու մասին**. «Ապա բաղձալին բնաւից, արեգակն ջահաւորեալ ի տանս Թորգոմեան, երանելի և մեծ մահատակն, պարծանաց զաւակն և **անդրանիկ որդին** սուրբ և երկմահանգէտ աթոռոյս Սիւնեաց՝ Ստեփանոս»²³:

Վերադառնալով Գանձակեցու Պատմությանը, որի էջերում Ստեփանոս Սյունեցին հիշատակվում է մի երրորդ անգամ ևս: Թվարկելով VIII դ. մի քանի նշանավոր վարդապետների՝ պատմիչը հիշում է նաև Սյունեցուն. «... մեծն իմաստասէր Ստեփանոս Սիւնեցի, աշակերտ Մովսիսի, զոր ի վերագոյնն յիշատակեցաք...»²⁴: Ն. Թահմիզյանի կարծիքով՝ «զոր ի վերագոյնն յիշատակեցաք» խոսքով Գանձակեցին ակնարկում է թարգմանչաց պարբերության մեջ երկու անգամ հիշատակված Ստեփանոս Սյունեցիներից երկրորդին միայն, քանի որ, «դիտել» է տալիս երաժշտագետը, միայն այդ երկրորդ և այս հատվածներում է Սյունեցին բնութագրվում «մեծն» ածականով²⁵: Սյունեցու անունը հիշատակող առաջին հատվածում այս ածականը չկա, ուրեմն «զոր ի վերագոյնն յիշատակեցաք»-ը չի վերաբերում այդ հատվածի Ստեփանոս Սյունեցուն. վերջինս այսպես առանձնանում և դարձյալ «մնում է» V դարում: Հարկ է, սակայն, նշել, որ Գանձակեցին այստեղ և այլուր «մեծն» ածականը բնավ չի գործածում տարբերիչ մականունի նշանակությամբ. այն սուկ մատնանշում է իր հերոսի նկատմամբ հեղինակի վերաբերմունքը, և պատումի բնույթն է հաճախ պայմանավորում այդ և նման բառերի գործածությունը: Եթե ա-

²¹ Ստեփանոս Օրբելյան, Պատմություն մահանգին Սիսական, Կ. Փարիզ, 1859, էջ 161:

²² Ղ. Ալիշան, Սիսական, էջ 20:

²³ Ստեփանոս Օրբելյան, Պատմություն մահանգին Սիսական, Կ. Փարիզ, 1859, էջ 173-174:

²⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 72:

²⁵ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 30:

ռաջնորդվելու լինենք Ն. Թահմիզյանի դատողությամբ, Գանձակեցու աշխատության վերջին էջերում մեկ անգամ ևս հիշվող, VIII դ. հեղինակ լինելու իրողությամբ ոչ մի կասկած չհարուցող²⁶ Ստեփանոս Սյունեցիին դարձնալ... ինքը չէ, այլ V դ. կարծեցյալ համանուն եպիսկոպոսը, քանի որ այստեղ ևս, ինչպես որ երաժշտագետի մատնանշած հատվածում, Սյունեցու անվան կողքին չկա «մեծն» ածականը²⁷: Ինչ վերաբերում է «զոր ի վերագոյնն յիշատակեցաք» խոսքին, այն, մեր կարծիքով, չի վերաբերում Թարգմանչաց պարբերության մեջ հիշատակված Սյունեցիներից և ոչ մեկին: «Վերևում հիշատակվածը» ոչ թե Ստեփանոս Սյունեցին է, այլ վերջինիս ուսուցիչը՝ Մովսեսը: Ի դեպ, հատվածը հենց այդպես էլ թարգմանել է Վ. Առաքելյանը. «... մեծն Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը՝ **վերևում հիշատակված Մովսեսի աշակերտը** (ընդգծումը մերն է՝ Լ. Ս.)»²⁸: Բնագրի ալպհիսի ըմբռնումը դյուրին է դարձնում այն հարցի լուսաբանումը, թե Կիրակոս Գանձակեցին, որոշակիորեն իմանալով VIII դ. Սյունեցու և՛ ապրած ժամանակը, և՛ ինքնությունը, ինչու²⁹ է նրան հիշատակում V դ. թարգմանչաց շարքում:

Ստեփանոս Սյունեցու վարքագիրներից Ստեփանոս Օրբելյանը և Մխիթար Այրիվանեցին (XIII դ.) հաղորդում են, որ նա ուսումնառել է Մովսես Սյունյաց եպիսկոպոսի մոտ²⁹: Սակայն Գանձակեցուն հայտնի չէ Ստեփանոսի ուսուցչի՝ Սյունյաց եպիսկոպոս լինելու իրողությունը. նա միայն գիտի, որ այդ ուսուցիչը կոչվել է Մովսես: Վերջինս հայ մատենագրության մեջ ներկայանում է նաև «քերթող», «քերթողահայր» պատվանուններով³⁰: Ենթադրում ենք, որ Գանձակեցուն ծանոթ է եղել Սյունեցու ուսուցչի «Մովսես քերթող» անվանումը: Այս ենթադրությունը հաստատվում է քանիցս հիշված «զոր ի վերագոյնն յիշատակեցաք» խոսքով, որով, ինչպես նշել ենք, Գանձակեցին ակնարկում է Սյունեցու ուսուցչին՝ Մովսեսին: Գանձակեցու աշխատության մեջ «վերևում հիշատակված» այլ Մովսես, որի հետ հնարավոր լինե՞ր կապել Սյունեցու անունը, բացի Խորենացուց, չկա: Ուրեմն պատմիչը, Սյունեցուն համարելով «աշակերտ Մովսեսի», վերջինիս ընկալում է իբրև Մովսես Խորենացի՝ շփոթելով նույնանուն մատենագիրներին: Այդպիսի շփոթման անսպասելի չէ «Մովսես քերթող» (Սյունեցի) – «Մովսես քերթող» (Խորենացի) համանունության պարագայում: Սրանով էլ բացատրվում է Գանձակեցու կողմից VIII դ. թարգմանչին V դ. Թարգմանչաց շարքում հիշատակելու փաստը: Որպես «աշակերտ Մովսեսի»՝ Սյունեցին «մուտք է գործում» V դ., բայց քանի որ Գանձակեցուն VIII դ. Սյունեցուց առաջ այլ Ստեփանոս Սյունեցի հայտնի չէ, նա ժամանակագրական այս փակուղուց ելքը գտնում է՝ Թարգմանչաց պարբերության մեջ հիշատակված Ստեփանոս Սյունեցուն երկու դեպքում էլ «և յետոյ» բառերով ժամանակով առանձնացնելով մյուս թարգմանիչներից:

2. V դ. Ստեփանոս Սյունեցու մասին տեղեկություններ հաղորդող մյուս մատենագրա-

²⁶ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պարմություն, առաջաբանը՝ Կ. Մելիք Օհանջանյանի, էջ ԽԵ:

²⁷ Նույն տեղում, էջ 331:

²⁸ **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պարմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Վարազ Առաքելյանի, Երևան, 1982, էջ 63:

²⁹ **Գ. Հովսեփեան**, Մխիթար Այրիվանեցի, նորագիտարձանագրություն և երկեր, Երուսաղեմ, 1933, էջ 17:

³⁰ **Մ. Չամչեան**, նշվ. աշխ., էջ 367:

կան աղբյուրը, որ մատնանշում է Մ. Չամչյանը, Հայսմավուրքն է: Հենց սկզբից ասենք, որ Հայսմավուրքի համապատասխան հաղորդումներում ակնարկ իսկ չկա որևէ Սյունեցի եպիսկոպոսի մասին: Մեսրոպ Մաշտոցին, Վ դ. հայ թարգմանիչներին և Հայոց գրերի գյուտին նվիրված եկեղեցական տոների ընթերցվածներում ընդամենը հիշվում է Թարգմանչաց շրջանի մի Ստեփանոս, որ մի դեպքում անվանվում է «Ստեփանոս Ասողիկ»³¹, մյուս դեպքում՝ «Ստեփանոս Ասողիկ պատմագիր»³², ի վերջո՝ «Ասողիկ»³³: Մ. Չամչյանն իրավացիորեն գտնում է, որ նշված Ստեփանոսը շփոթված է մեկ ուրիշ համանուն հեղինակի՝ X դ. Ստեփանոս Ասողիկ Տարոնացի պատմագրի հետ, բայց միևնույն ժամանակ վերոբերյալ հիշատակությունից դուրս է բերում մի այլ Ստեփանոս՝ **եպիսկոպոս Սյունյաց**³⁴: Դժվար չէ տեսնել, որ այդպիսի եզրահանգման համար Յայսմավուրքի հաղորդումները որևէ հիմք չեն տալիս: Հայսմավուրքի այս հաղորդումների պատմական արժեքը գերազանաատում է մասն. Բ. Թահմիզյանը. «Հայսմավուրքում... փաստորեն (°) երեք անգամ հիշատակվում է Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսը, երեք տարբեր ձևերով»³⁵:

Մ. Չամչյանը և Բ. Թահմիզյանը իրենց տեղեկությունները քաղել են Հայսմավուրքի 1730 թ. Կ. Պոլսի հրատարակությունից, որի հիմքում ընկած է Դրիգոր Ծերենց Սլաթեցու (XV դ.) խմբագրությունը: Նկատի ունենալով, որ մինչև Սլաթեցին Հայսմավուրք ժողովածուներն ունեցել են մի քանի խմբագրություններ, փորձեցինք պարզել, թե ու՞մ ձեռքով կարող էին Հայսմավուրք թափանցել V դ. Ստեփանոս կարծեցյալ թարգմանչի մասին առաջին տեղեկությունները:

Հայսմավուրքի առաջին՝ Տեր-Իսրայել Խաչենցուն (XIII դ.) պատկանող խմբագրության ձեռագրերն իրենց համապատասխան ընթերցվածներում որևէ Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոս կամ Ստեփանոս թարգմանիչ չեն հիշատակում: Մաշտոցի անվան Մատենադարանի՝ Տեր Իսրայելի խմբագրությանը պատկանող ձեռագիր մի Հայսմավուրք «Մեհեկի ԺԴ և փետրուարի ԺԴ, Վարք և կատարումն սուրբ հօրն մերոյ Մեսրոպա վարդապետին» տոնանիշ խորագրի տակ հաղորդում է. «Իսկ մախ քան զդարձ մոցա, որք կատարեցան ի փիլիսոփայական իմաստ»՝ Դաւիթ, Մովսէս, Եզնակ, Մամբրէ և այլք, վաղման եհաս հայրապետին Սահակայ»³⁶: Սրա հետ մույնական են և Ստեփանոս թարգմանչի մասին որևէ հիշատակություն չեն բովանդակում Տեր Իսրայելի անվամբ հայտնի այլ ձեռագրերի համապատասխան ընթերցվածները ևս³⁷: Դա բնական է, քանի որ V դ. կարծեցյալ Սյունեցու մասին հիշատակություն չունեն մասն. Տեր Իսրայելի խմբագրության համար հիմք ծառայած³⁸ այլ ժողովածուների (Ժառըմտիր, Տոնական) համապատասխան

³¹ Յայսմավուրք, փրէի ԺԷ և նոյեմբերի ԻԵ:

³² Նույն փրէում, մեհեկի ԺԳ և փետրվարի ԺԹ:

³³ Մ. Չամչյան, նշվ. աշխ., էջ 781-782:

³⁴ Բ. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 31:

³⁵ Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. թիվ 6283, էջ 69բ:

³⁶ Նմմ. ՄՄ, ձեռ. թիվ 7463, էջ 115ա, 207ա, ձեռ. թիվ 4737, էջ 29բ, ձեռ. թիվ 4873, էջ 58բ-59ա, 252բ, 323բ, ձեռ. թիվ 4741, էջ 201ա:

³⁷ Այս մասին փն՝ Մ. Ավդալբեկյան, «Յայսմավուրք» ժողովածուները և նրանց պատմագրական արժեքը, Երևան, 1982, էջ 63-67:

³⁸ Տե՛ս ՄՄ, ձեռ. թիվ 8179, էջ 159ա:

ընթերցվածները ևս: Մատենադարանի թիվ 8179 ձեռագիր ճառընտիրը, օրինակ, «Վարք և կատարումն սուրբ հարն մերոյ և վարդապետին Մեսրոպայ» խորագրի ներքո հաղորդում է նույն տեքստը՝ նույն անունների թվարկումով, որ մեջբերվեց վերևում³⁹:

Հայսմավուրքի երկրորդ խմբագրությունը հայտնի է Կիրակոս Արևելցու անունով (XIII դ.): Այս խմբագրության ձեռագրերում արդեն հիշատակվում է մի Ստեփանոս թարգմանիչ, ընդամենը՝ մեզ համար կարևոր է ոչ այնքան հիշատակման փաստը, որքան այս թարգմանիչին հիշատակելու կերպը. «Եւ առաքեն յաշակերտաց իւրեանց ի Կոստանդնուպոլիս և յԱթէնս ... որոց էին գլխաւորք՝ Մովսէս Խորենացի, և Կորիւն, և Եզնակ, և Արծան, և Յովսէփ, և Ղեւոնդ, Եղիշէ, և Դաւիթ, որպէս **և յետոյ Ստեփանոս**»⁴⁰: Տարակուս չկա, որ այս ցուցակում ևս Ստեփանոս թարգմանիչը ժամանակով առանձնացվում է մյուսներից և, որ ուշագրավ է, միևնույն ձևով («և յետոյ»): Սա չի կարող դիտվել իբրև պատահական համընկում, մանավանդ երբ մտաբերում ենք, որ բանասիրության մեջ նույնացվում են XIII դ. Կիրակոս Գանձակեցի և Կիրակոս Արևելցի մատենագիրները⁴¹: Այս պարագայում մեզ երկու կարևոր հետևություն անելու հնարավորություն է ընձեռվում. մախ՝ Հայսմավուրքն այլևս չի կարող համարվել V դ. կարծեցյալ Այուսեցու մասին տեղեկություններ հաղորդող **անկախ-լրացուցիչ** աղբյուր, ինչպես ջանում են ներկայացնել Մ. Չամչյանն ու Ն. Թահմիզյանը, և ապա՝ Ստեփանոս թարգմանիչի կապակցությամբ «և յետոյ» բառերի այս երրորդ գործածությունը ոչ մի կասկած չի թողնում դրանց ժամանակատարբերիչ նշանակության մասին:

Ստեփանոս թարգմանիչի մասին Կիրակոս Արևելցու հիշատակությունն ամբողջովին այլափոխվել է Հայսմավուրքի հաջորդ՝ Գրիգոր Ծերենց Սլաթեցուն պատկանող խմբագրությունում: Նախ՝ Արևելցու կողմից միայն Թարգմանչաց տոմի ընթերցվածում հիշվող այս Ստեփանոսը Սլաթեցու խմբագրությունում հայտնվում է նաև Մեսրոպ Մաշտոցին, Հայոց գրերի գլուտին մվիրված տոմերի ընթերցվածներում⁴²: Այնուհետև Ստեփանոսը, որ Արևելցու կողմից հիշվում է Թարգմանչաց ցուցակի վերջում «և յետոյ» բառերով, Սլաթեցու խմբագրության առաջին՝ Թարգմանչաց տոմի ընթերցվածում հիշվում է ցուցակի մեջ (ոչ վերջում)՝ բնականաբար արդեն առանց «և յետոյ» բառերի⁴³: Բայց Սլաթեցու կողմից իր աղբյուրի՝ Արևելցու Հայսմավուրքի առավել ուշագրավ այլափոխում ենք դիտում հետևյալը. եթե Արևելցին թարգմանիչներին հիշում է միայն անուններով (բացառությամբ Մովսէս Խորենացու), Սլաթեցին հավելում է նաև նրանց ծննդավայրը, ազգակցական կապը ցույց տվող մականուն-բացատրություններ, այլ մանրամասներ. «... Եւ գլխաւորք յաշակերտք նոցա (Սահակի և Մեսրոպի՝ Լ. Ս.) այսոքիկ՝ Սուրբն Յովսէփ և Սուրբն

³⁹ ՄՄ, ձեռ. թիվ 7530, էջ 40ա:

⁴⁰ Նմմր. Յայսմաւորք, Կրէի ԺԷ և նոյեմբերի ԻԵ: Մեհեկի ԺԳ և փետրվարի ԺԹ:

⁴¹ Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն հայոց, Կ. Մելիք-Օհանջանյանի առաջաբանը, էջ Թ-ԺԱ: **Ա. Սրապյան**, Բանասիրական ճշգրտումներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1972, N 4, էջ 137-145: **Մ. Ավդալբեկյան**, նշվ. աշխ., էջ 68: Երկու Կիրակոսների նույնության խնդրում բանասիրությունը քանի դեռ անվերապահ չէ, ձեռագիր **տարբեր** աշխատությունների **նույն** խոսքային հավրվածում **նույն** «և յետոյ»-ի կրկնությունը դառնում է կարևոր մատենագրական փաստ երկու համանուն հեղինակներին **նույն** պատմական անձը համարելու համար:

⁴² Նույն տեղում, հոդի ԺԸ և սեպտեմբերի ԺԷ:

⁴³ Նույն տեղում:

Ղևոնդ երեց որք ի Պարս վկայեցին: Սուրբն Եղիշէ վարդապետն, եւ Մովսէս Խորենացի, եւ եղբայրն Մովսէսի Մամբրէ վերծանող: Եւ Եզնակ Կողբացի...»⁴⁴: Թարգմանիչների ինքնությունը ճշտելու, նրանց բնութագրելու այս մղումով հասնելով Արևելցու հիշած Ստեփանոսին՝ Խլաթեցին անծանոթ այս թարգմանչին ընթերցողի համար «պարզ» է դարձնում «Ստեփանոս Ասողիկ»⁴⁵ հորջորջումով՝ ակներևաբար շփոթելով, ինչպես արդեն նշվել է, X դ. Ստեփանոս Ասողիկ Տարոնացի պատմագրի հետ: Ծփոթն ավելի է խորանում հաջորդ՝ գրերի գյուտին նվիրված տոմի ընթերցվածում, որտեղ ավելի են ընդարձակվում թարգմանիչների ինքնությունը ցույց տվող բացատրությունները, և Ստեփանոս թարգմանիչն էլ կըքվում է «Ստեփանոս Ասողիկ պատմագիր» անունով: Այսպես, Խլաթեցու ձեռքով հայտնվում է Թարգմանչաց շրջանի ոմն «Ստեփանոս Ասողիկ», որը և բանասիրության մեջ դառնում է այլազան ենթադրությունների առարկա⁴⁶:

3. Մյուս մատենագիրը, ում վկայակոչում է Մ. Չամչյանը, Ղազար Զահկեցին է: Վերջինս «Դրախտ ցանկալի» գրքում տալիս է հայ մատենագիրների մի ցանկ, որտեղ V դ. մատենագիրների շարքում հիշվում է մի Ստեփանոս, բայց ամենևին ոչ Սյունեցի⁴⁷: Ամմիջապես ասենք, որ այս ցանկի մասնավորապես V դարին վերաբերող հատվածը, մատենագիրների հերթականության չնչին փոփոխություններով, մաքուր է Դանձակեցու Պատմությունից:

Կիրակոս Գանձակեցի

1. Մովսէս

2. Կորիւն

3. Եղիշէ

4. Ղազար

Եզնակ

Դաւիթ

5. Մամբրէ

6. Ստեփաննոս⁴⁸

6. Ստեփաննոս⁴⁹

Ղազար Զահկեցի

1. Մովսէս

Դաւիթ

2. Կորիւն

3. Եղիշէ

4. Ղազար

5. Մամբրէ

⁴⁴ Նույն տեղում:

⁴⁵ Նույն տեղում:

⁴⁶ Ն. Թահմիզյանը, օրինակ, ամբողջ շարք ենթադրություններ է անում V դ. կարծեցյալ Մյունեցու «Ասողիկ» մականվան մասին՝ չենթադրելով, որ մականունը մի պարզ շփոթի հետևանքով է հայրնվել Խլաթեցու Նայսմավորքում: Թերևս տեղին է հիշել այս Նայսմավորքի՝ պարմական ոչ լիարժեք աղբյուր լինելու վերաբերյալ Մ. Ավգերյանի կարծիքը, որը նշում էր նրանում «բազում ինչ աղբորդ» լինելու մասին (տե՛ս Մ. Ավգերյան, Լրումն լիակարար վարուց եւ վկայաբանութեանց սրբոց, Խ. ԺԱ, Վենետիկ, 1814, էջ ՆԷ):

⁴⁷ Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, շարադրեալ ի Ղազարու աստուածաբան վարդապետէ Ծահկեցոյ (այսուհետք՝ **Ղազար Զահկեցի**), Կ. Պոլիս, 1735, էջ 624-625:

⁴⁸ **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն, էջ 28-29:

⁴⁹ **Ղազար Զահկեցի**, նշվ. աշխ., էջ 620-625:

Նշենք, որ այս ցանկը ներկայացնելուց առաջ և հետո Զահկեցին ամբողջ էջեր ևս քաղում է Գանձակեցուց, ավելի ստույգ՝ արտագրում⁵⁰: Այս պարագայում, բնականաբար, Զահկեցին նույնպես չի կարող V դ. կարծեցյալ Սյունեցու մասին անկախ-լրացուցիչ աղբյուրի նշանակություն ունենալ: Ն. Թահմիզյանն էլ է Զահկեցուն համարում անկախ աղբյուր: «Զահկեցին ևս խարխափում է», - գրում է երաժշտագետը⁵¹, չնկատելով, որ Զահկեցին ոչ թե խարխափում, այլ պարզապես բառացի կրկնում է Գանձակեցուն⁵²:

4. Վերջին պատմական աղբյուրը, որն իբր տեղեկություններ է հայտնում V դ. կարծեցյալ Սյունեցու մասին, Թովմա Մեծոփեցու «Պատմություն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց» երկն է, որտեղ տրված է եկեղեցու «սուրբ վարդապետաց» մի ցուցակ, որի մեջ նախ հիշվում են համաքրիստոնեական նշանակության մի քանի աստվածաբաններ, ապա «մեր աստվածաբաններից»՝ Ստեփանոս Սյունեցին, Անանիա Ծիրակացին, Պողոս Տարոնացին, Հովհանն, Սարգիս Հաղպատեցին, Դավիթ փիլիսոփան, Մովսես Քերթողաճալը, Ասողիկ թարգմանիչը (թվարկում ենք բնագրային հերթականությամբ)⁵³: Ինչպես երևում է, Մեծոփեցու կողմից աստվածաբանները հիշվում են ամենևին էլ ոչ ժամանակագրական կարգով. Պողոս Տարոնացուց (XII դ.) հետո են հիշվում, օրինակ, V-VI դդ. մատենագիրներ Դավիթ փիլիսոփան ու Մովսես Քերթողաճալը, ուրեմն՝ առաջինը Ստեփանոս Սյունեցու անվան հիշատակությունից բնավ չի ենթադրվում, թե նա ժամանակագրական առումով նախորդում է թվարկված մյուս աստվածաբաններին և կարող է համարվել V դ. աստվածաբան: V դ. Ստեփանոս Սյունեցու գոյության վերաբերյալ Մ. Չամչյանի տեսակետին չի կարող նպաստել նաև այդ ցուցակում Ասողիկ թարգմանչի հիշատակությունը. նախ՝ անհնար է այդ հիշատակությունից **Ստեփանոս Սյունեցի** դուրս բերել, երկրորդ՝ Ստեփանոս թարգմանչի **Ասողիկ** մականունը, ինչպես արդեն ցույց ենք տվել, թյուրիմացության հետևանք է և գալիս Խլաթեցու Հայսմավուրքից:

Այսպիսով՝ Միքայել Չամչյանի նշած պատմական աղբյուրներից երեքը՝ Կիրակոս Գանձակեցու, Ղազար Զահկեցու աշխատություններն ու Հայսմավուրքը, որոնք տեղե-

⁵⁰ Նմմր, նույն վրեղում, էջ 620,645:

⁵¹ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 30:

⁵² Աղբյուրից բառացի օգտվելու մի փաստ է նաև հետևյալը. Գանձակեցին, իր աշխատության մեջ թվարկելով V դ. թարգմանիչներից մի քանիսի ինքնուրույն երկերը, պարբերությունն ավարտում է VIII դ. Սյրեփանոս Սյունեցու մատենագրական երկերը հիշարկելով, որին անմիջապես հետևում է Թարգմանչաց կողմից հորինված հոգևոր երգերի թվարկումը՝ «Արարին – երգս շարականաց քաղցր – գեղեցիկ եղանակաւ...» և այլն (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն, էջ 29): **Զահկեցին բառացի կրկնում է նույնը՝ սխալմամբ իր աղբյուրի «արարին» հոգևակի բայը ընկալելով եզակի՝ «արար», – Թարգմանչաց վերագրվող բոլոր հոգ–որ երգերը հարկացնում է Սյրեփանոս Սյունեցուն. «Երգեաց – երգս շարականաց քաղցր – գեղեցիկ եղանակաւ...» – այլն (Ղազար Զահկեցի, էջ 625): Բանասերներից Մեսրոպ արքեպս. Գրիգորյանը Զահկեցու այս հաղորդումը համարում է հավանական (նմմր, Մ. Գրիգորյան, Սյրեփանոս Սյունեցի, էջ 43-44), իսկ Ն. Թահմիզյանը, վրեսնելով V դ. սրբաշնչված հոգևոր երգերի մասին Գանձակեցու և Զահկեցու հաղորդումների նմանությունը, չի նկատում դրանց բացարձակ նույնությունը (Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 38): Այնուհետև նա «կիսում է» Մ. Գրիգորյանի կարծիքն առ այն, որ Սյունեցին գուցե «ոչ թե գրեր, այլ կարգեր, շարեր է, կանոնի վերածեր... տոներու և սուրբերու շարականները» (Մ. Գրիգորյան, նշվ. աշխ., էջ 44): Սկզբնաղբյուրի սխալ ընկալման վրա հիմնված Զահկեցու այս վրեղելությունները, ինչպես նաև դրանցից բխող ենթադրությունները պետք է, սակայն, մերժել:**

⁵³ **Թովմա Մեծոփեցի**, Պատմություն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860, էջ 38:

կույրություններ են հաղորդում V դ. կարծեցյալ Սյունեցու մասին, փաստորեն **անկախ աղբյուրներ** չեն. դրանց **ակունքը** **նույնն է՝ Գանձակեցին, իսկ վերջինիս կողմից V դ. Թարգմանչաց շարքում VIII դ. Ստեփանոս Սյունեցու հիշատակությունը պայմանավորված է Մովսես (Քերթոդ) Սյունեցի – Մովսես (Քերթոդ) Խորենացի շփոթով: V դ. Սյունեցու գոյության օգտին, ինչպես տեսանք, ոչ մի նոր բան չի ավելացնում մահ թովմա Մեծոփեցին: Հետևաբար, գոյություն չունի մատենագրական որևէ հավաստի տվյալ կամ տեղեկություն, որի հիմամբ հնարավոր լիներ ընդունել Ստեփանոս Սյունեցի Ա եպիսկոպոսի և շարականագրի, «Սահակ-մեսրոպյան շրջանի կրտսեր աշակերտի» գոյությունը V դարում:**

Արդ փորձենք կարճատև անդրադարձ կատարել Ն. Թահմիզյանի հիշված հոդվածում հոգուտ V դ. Սյունեցու գոյության բերված մի քանի լրացուցիչ փաստարկների: Նախապես ընդգծենք, որ որևէ պատմական անձի գոյություն արձանագրվում է պատմական, մատենագրական **փաստերով**, ոչ թե **սոսկ փաստարկներով**, որոնք մատենագրական անորոշ տվյալների կանխակալ ընկալմամբ և առաջադիր վարկածին դրանք ամեն գնով ծառայեցնելու ձգտմամբ երկբայելի են և, ինչպես կտեսնենք, անհամոզիչ:

Ծարականագիրների միջնադարյան ցուցակներում և այլ մատենագրական աղբյուրներում Հարության ավագ օրհնությունների գլ (երրորդ կողմ) շարքի երգերը ներկայացվում են որպես Ներսես Ծնորհալու ստեղծագործություններ: XIX դարի սկզբից կասկածի տակ է առնվում այդ տեղեկությունների ստուգությունը (Գ. Ավետիքյան, այնուհետև՝ Դ. Ալիշան, ուրիշներ): Մեր օրերում ևս բանասիրությունը հակված է ոչ միայն կասկածելու, այլև արդեն փաստարկելու դրանց անստույգ լինելը: Այդպես են վարվում, օրինակ, Գ. Հակոբյանը, Ն. Թահմիզյանը: Մասնավորապես վերջինը Հարության կանոնի գլ շարքի հեղինակության վերագրումը Ծնորհալուն համարելով «պատմական թյուրիմացության արդյունք» (իր տեսակետի ամրապնդման համար՝ արդարև «արդյունք»), աշխատում է կանոնի, մահ գլ շարքի երգերի «երաժշտական բաղկացուցիչ» քննությամբ ապացուցել, որ ամբողջ կանոնը հեղինակել է V դարի Ստեփանոս Սյունեցին, քանի որ այդ դարում էր հնարավոր այնպիսի երաժշտական ստեղծագործությունների ծնունդը, որպիսիք էին Հարության երգերը: Վերջիններս, ըստ երաժշտագետի, բնութագրվում են «պարզ լսողական հիմքով», «մեղեդիների ելևէջային կողմի» անպարզությամբ, «միջակ կամ չափավոր» ընթացքով: Բոլոր այս յուրահատկությունները վերագրելով նույնիսկ խիստ որոշակի ժամանակի՝ «մասնավորապես V հարյուրամյակի երկրորդ կեսին»⁵⁴ հենց այն ժամանակաշրջանին, երբ ապրել ու ստեղծագործել է կարծեցյալ Ստեփանոս Սյունեցի առաջինը, Ն. Թահմիզյանը դրանով փաստարկում է թե՛ V դարի Ստեփանոս Սյունեցու գոյությունը, թե՛ Հարության կանոնի նրա հեղինակությունը: Մինչդեռ եթե երաժշտական այդ յուրահատկությունները հատկանշական համարվեին Ներսես Ծնորհալուն վերագրվող, այն է՝ XII դարում ստեղծված երգերին, կնշանակեր այդպիսի երգերի ստեղծումը կարելի կլիներ հնարավոր համարել մահ VIII դարում Ստեփանոս Սյունեցի երկրորդի կողմից: Իսկ դա ի չիք կդարձնում V դարի Սյունեցու գոյության և Հարության կանոնի՝ V դարում վերջինիս կողմից հորինված լինելու երաժշտական «փաստարկ-ապացույցը»: Եվ նկատելով այս երգա-

⁵⁴ Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 37:

շարքում Օնորհալու երաժշտության ազդեցության հետքեր՝ երաժշտագետը եզրակացնում է. «Մեր համոզմամբ, Օնորհալու ստեղծագործություններից եկող սույն ակնհայտ ազդեցությունն է, որ, ի վերջո, տեղի է տվել ավագ օրհնությունների գկ շարքը մեծ երաժշտագետ-բանաստեղծին վերագրելու»⁵⁵:

Հարկ է նշել. այս երգաշարքում առկա են Օնորհալուց եկող ոչ միայն երաժշտական, այլև գրական ազդեցության ակնհայտ նշաններ, որպիսի դեպքում խոսքը, բնականաբար, սոսկ պարզ ազդեցության մասին չի կարող լինել: Չենք կարծում, թե VIII և, առավել ևս, V դարում հնարավոր էր տաղաչափորեն կանոնավոր այնպիսի հոգևոր երգի ծնունդ, ինչպիսին է, դիցուք, հետևյալը՝ նույն գկ շարքից.

Հաստատեցան սիրտըք մեր
առ քեզ, փառաց Թագավոր,
որ ի յերկնից խոնարհեալ
իջեր փրկել զարարածս:

Պահեա զմեզ նշանաւ
յաղթող խաչի Քո Քրիստոս,
յոր բարձրացար կամաւ Հօր
բարձէր զանէծս Աղամայ:

Որ զնախամօրն ըզյանցանս
լուծէր ծննդեամբ Քո սուրբ կոյս.
բարեխօսեա անդադար
վասըն մերոյ փրկութեան:

Բանաստեղծական այս նմուշը տաղաչափական առումով, ինչպես նաև ոճի պարզության ակնհայտորեն տարբեր է Հարության կանոնի բոլոր մյուս երգերից և հարազատորեն մերվում է Ներսես Օնորհալու բանաստեղծական ժառանգությանը⁵⁶: Հետևաբար պատճառ չկա չընդունելու ա) միջնադարյան մատենագիրների, բ) Հայսմավուրք ժողովածուների, գ) շարականագիր հեղինակների միջնադարյան ցուցակների **միաբերան և աներկբա** վկայությունները գկ շարքի երգերի հեղինակային պատկանելության վերաբերյալ:

Հարության կանոնի շարականների գրական տեքստի լեզվական քննությունը ևս բե-

⁵⁵ Նույն պեղում: Եթե նույնիսկ ընդունենք, որ երաժշտական նշված յուրահատկություններով երգերի ծնունդը հնարավոր էր միայն V դարում, արդյո՞ք կարելի է դա հիմնավոր ապացույց համարել այդ երգերի գրական տեքստի հորինումը ևս նույն ժամանակին վերագրելու համար, ինչպես անում է Ն. Թահմիզյանը: Արդյո՞ք հնարավոր չէր նոր գրական տեքստի (դիցուք՝ VIII կամ XII դարի) և հին մեղեդիների (օրինակ՝ V դարում ստեղծված) գուցողմամբ նոր երգերի ծնունդը: Խոսելով Մեսրոպ Մաշտոցին վերագրվող շարականների մասին իր մի հոդվածում Ն. Թահմիզյանը ոչ միայն հնարավոր է համարում, որ «հնագույն մի երգի միայն եղանակը կարող է փոխված լինել», այլև «մի **հին եղանակ նոր խոսքերի** կարող է հարմարեցված լինել (ընդգծումը մերն է՝ Լ. Ս.)» (տե՛ս «Բանբեր Մարենադարանի», թիվ 7, 1964, էջ 198):

⁵⁶ Պայմանավորված այս տարակարծություններով, ինչպես նաև խնդրի անհարկի խճողմունքով՝ սույն երգաշարքին, որպես Շնորհալու գրական-երաժշտական ժառանգության, առ այսօր բանասիրական, գրականագիտական պարզաճանդարձ չի կապարվել:

րում է համոզման, որ դրանք չէին կարող հորինված լինել V դարում: Նկատի ունենք այս շարականների բառապաշարում առկա բազմաթիվ միավորներ, որոնց գոյությունը V դարում համարում ենք առնվազն անհավանական: Մասնավորապես V դարում ստեղծված հայոց հոգևոր երգերին անդրադարձած բանասերները նշում են դրանց լեզվական պարզությունը, մաքրությունը: Մինչդեռ, ինչպես նկատում է Ա. Զամինյանը, Հարության կանոնը «կբովանդակէ շատ անսովոր, խորթ ու բազմավանկ բառեր (ընդգծումը մերն է՝ Լ. Ս.)»⁵⁷: Ահա փոքրիկ մի ցանկ այդպիսի բառերի՝ **անիծադրութիւն, անաղաղաբեր, դառնաճաշակ, լուսանեմ, հրանիթ**: Նշված բառերից և ոչ մեկը V դարի մատենագրությունից ավանդված չէ⁵⁸: Բնականաբար, եթե դրանք բացակայում են պատմագրական ծավալում երկերում, որոնք բառաստեղծման ավելի լայն հնարավորություններ (և կարիք) ունեին, ուրեմն գրեթե անհնար է այդպիսի բառեր ենթադրել նույն դարում ստեղծված հոգևոր երգերում, որոնք, Աբեղյանի նկատումով, «IV և հավանորեն V դարերում եղել են դեռ մեծ մասամբ փոքրիկ կտորներ և իբրև հավելված ասվել են Ս. Գրքի օրհնություններից հետո»:

Ն. Թահմիզյանը որպես լրացուցիչ փաստարկ է ընդունում նաև այն, որ Հայկազեան բառգրքի հեղինակները ևս արձանագրում են V դարում Ստեփանոս Սյունեցի եպիսկոպոսի գոյությունը և Հարության օրհնությունները վերագրում են նրան: Անհրաժեշտ է, սակայն, նշել, որ բառգրքի հեղինակներն իրենց համոզումը որևէ ձևով չեն հիմնավորում. նրանք միայն մատնանշում են տարբեր դարերում ապրած Ստեփանոս անունով մի քանի Սյունյաց եպիսկոպոսների (և ոչ թե սուկ մեզ հետաքրքրող երկու համանուն հեղինակների) «գործերի» ոչ միառժամ լինելու հանգամանքը: Թահմիզյանը բառգրքի հեղինակների համոզումը համարում է «միանգամայն ուշագրավ», «հիմնված բազմաթիվ գրչագրերի ծանոթության վրա» (°): Հայկազյան բառգիրքը ստեղծվել և հրատարակվել է Մ. Չամչյանի «Պատմութիւն Հայոց» աշխատությունից բավական ժամանակ անց, հետևաբար չի բացառվում բառգրքի հեղինակների՝ այդ աշխատությունից օգտված լինելու հանգամանքը: Կարծում ենք՝ այս ենթադրությունը հիմնավորող փաստեր կան:

Մ. Չամչյան

Հայկազյան բառգիրք

1. «... Ստեփաննոս Սիւնեցի ոչ է մի կամ երկու, այլ բազում»:
«Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս՝ ոչ մի, այլ բազում ի զանազան դարս
2. «... Յայսմաւորքն և Կիրակոս և այլք ոմանք յետինք խառնեալ զսոսա ընդ միմեանս, զգործս երկրորդին տան առաջնոյն, և գործս առաջնոյն տան երկրորդին»:
և գործ մոցա խառն ընդ իրերաց...»:

⁵⁷ Ա. Զամինյան, նշվ. աշխ., էջ 179:

⁵⁸ Հմմտ. Ագաթանգեղոսի, Կորյունի, Բուզանդի, Եղիշեի, Խորենացու երկերի համադրվածությունը: Զարմանալի չէ, որ Հայկազեան բառգրքի օրինակները հեղուկեղաբյան են, այդ թվում՝ նաև Հարության կանոնի շարականներից: Ներառված է, որ, օրինակ, **հրանիթ** բառը չունի նույնիսկ Նարեկացին, իսկ ահա VIII դարի Սյունեցին բառը գործածել է ոչ միայն շարականի մեջ, այլև իր մի մեկնաբանական երկում:

Օգտվելու փաստը, մեր նկատումով, ակնհայտ է: Ուշագրավ է «ի զանազան դարս» արտահայտությունը, որը յուրովի է մատնանշում բառգրքի հեղինակների՝ Չամչյանից օգտվելու փաստը. վերջինիս բավական երկար հատվածի փոխարեն, որում թվարկվում են **զանազան դարերում** ապրած Ստեփանոս անունով Սյունյաց եպիսկոպոսներ, բառգրքի հեղինակները սեղմ, որպես պատշաճ է բառարանի «Գրոց ցանկին», նշում են՝ «**ի զանազան դարս**»: Այսպիսով՝ խիստ տարակուսելի և թույլ փաստարկ է վկայակոչել բառգրքի հեղինակներին՝ որպես «բազմաթիվ գրչագրերի» ծանոթությամբ V դարի շարակաճագրի գոյությունը իբրև թե փաստողներ:

Կարծում ենք, անգո այս հեղինակի մասին մատենագրական աղբյուրների «տեղեկությունների» անարժեք կամ առնվազն ոչ լիարժեք լինելն է պատճառը, որ Ն. Թահմիզյանն իր հոդվածում պարբերաբար կարիք է զգում վկայակոչելու Հայկազյան բառգրքի հեղինակների կամ Ս. Չամչյանի «ձեռքի տակ եղած», բայց այժմ անհայտ «աղբյուրներ», ինչը, խնդրի բանասիրական կարևորությունը նկատի ունենալով՝ առնվազն տարօրինակ է: «Եվ չնայած այս մեծ խառնաշփոթին (Ստեփանոսների՝ Լ. Ս.), Չամչյանը նախանձելի հատակատեսությամբ պարզում է հարցը (ըստ բոլոր տվյալների (°) օգտագործելով այլ գրչագիր աղբյուրներ էլ, առանց հիշատակելու դրանք)...»: Եթե Ն. Թահմիզյանի այս համոզման հիմքը Չամչյանի՝ վերը մեջբերված խոսքն է (« ... Յայսմաւորքն և Կիրակոս և այլք **ոմանք յետինք...**»), ապա հիշեցնենք միայն, որ «ոմանք յետինք»-ը Չամչյանը հետո պարզում է՝ Թովմա Մեծոփեցի և Ղազար Զահկեցի՝ ժամանակագրորեն իսկապես «յետինք»: Հետևաբար հարկ չկա Չամչյանի «ձեռքի տակ» դնել անգո աղբյուրներ, որոնց գոյության պարագայում մեծանուն պատմագետը դրանք կօգտագործեր-կհիշատակեր **անպայման**, այլ ոչ թե ստիպված կլինեք բավարարվել իր աղբյուրների երկբայելի տեղեկություններով:

Ամփոփենք: V դարի Ստեփանոս Սյունեցու գոյությունը փաստող մատենագրական ոչ մի հավաստի տվյալ չկա, եղածներն էլ, ինչպես տեսանք, միանգամայն անստույգ են, տարտամ և ամենևին չեն կարող դիտվել մատենագրական համոզիչ վկայություններ՝ այդպիսի մի պատմական անձի գոյությունը վավերացնելու համար: Բանասիրության մեջ ծայր առած տարակարծությունները սկսվում են Ս. Չամչյանի՝ V դարի Ստեփանոս Սյունեցու գոյության և Հարության կանոնի հեղինակ լինելու փաստագուրկ, անհիմն եզրահանգումից, մինչդեռ կանոնի շարականների լեզվական քննությունը ևս վկայում է դրանց՝ հետոսկեդարյան գրաբարով հորինված լինելու հանգամանքը, ինչով վերանում է V դարում մի շարականագիր հորինելու անհրաժեշտությունը: